



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ
Ս. ՆԱՐԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, Մարտ 4, 2007, Մեծ Պահոց շրջանի երրորդ Կիրակին է, որ կը կոչուի Անառակի Կիրակի:

Այս առիթով Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը:

**PRELATE TO PRESIDE OVER MASS AT
HOLY MARTYRS CHURCH**

Sunday, March 4, 2007, is the third Sunday of Lent and the Sunday of the Prodigal Son. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Mass at Holy Martyrs Church in Encino and deliver the sermon.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ՆԱԽԱԳԱՐՅԵ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՐԵՒԱԳԱԼԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ ՄԵԾ
ՊԱՐՈՑ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Մեծ Պահոց շրջանին Արեւագալի եւ Հսկումի հոգեպարար արարողութիւնները կանոնաւորապէս կը շարունակուին Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ:

Չորեքշաբթի, Փետրուար 28-ին, Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսապետեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Արեւագալի ժամերգութեան եւ փոխանցեց օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը: Ներկայ էր նաեւ Գերպ. Ս. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան:

Արեւագալի արարողութենէն ետք, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը կազմակերպած էր Մեծ Պահոց աւանդական ճաշկերոյթը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին: Ձեռնարկը տեղի ունեցաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ:

Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամները պատրաստած էին Պահոց յատուկ ճաշեր: ճաշկերոյթին հանդիսավարն էր Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամ Տիկին Հուրիկ Ապտուլեան: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց իր օրհնութեան խօսքը եւ շնորհաւորեց Ազգ. Առաջնորդարանի

Տիկնանց Օժանդակ Մարմինի աշխատանքները: Բերիոյ Թեմի նախկին Առաջնորդ Բարձր. Տ. Սուրեն Արք. Գաթարոյեան, որ հիւրաբար մեր Թեմը կը գտնուի, փոխանցեց օրուան պատգամը: Իրագործուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:

Եւեթ, որ նոյն օրը, Գերշ. Տ. Սուրեն Արք. Գաթարոյեան հանդիսապետեց Յովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Արեւագալի ժամերգութեան եւ քարոզեց: Ներկայ էին Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ Յովիվուտի Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. վարժարանի աշակերտները:

Յայտնենք որ, Չորեքշաբթի, Մարտ 7-ին, Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահէ Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Արեւագալի արարողութեան:

PRELATE PRESIDES OVER MORNING SERVICE AND PRELACY LADIES AUXILIARY LENTEN LUNCH AT ST. MARY'S CHURCH

On Wednesday, February 28th, the Prelate conducted morning services and delivered his sermon at St. Mary's Church in Glendale. Very Rev. Fr. Muron Aznikian also participated in the service.

Following church services, the annual traditional Lenten lunch of the Prelacy Ladies Auxiliary took place at the church hall under the auspices of the Prelate. In his remarks, the Prelate conveyed his blessings and commended the hard work of the Ladies Auxiliary members while H.E. Archbishop Suren Kataroyan explained the meaning behind the Sundays of Lent. An artistic program also took place.

On the same morning, Archbishop Kataroyan conducted services at St. Garabed Church in Hollywood, with the participation of Very Rev. Fr. Barthev Gulumian. Present were students from Rose & Alex Pilibos high school

On Wednesday, March 7th, Archbishop Mardirossian will preside over services at St. Sarkis Church in Pasadena.

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ուրբաթ, Մարտ 2-ի երեկոյեան, ժամը 8-էն սկսեալ, Փասատիւնայի Հայ Կեդրոնին մէջ տեղի պիտի ունենայ Փասատիւնայի Ս. Սարգիս Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տարեկան ճաշկերոյթը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Ձեռնարկին հիւրընկալութիւնը ստանձնած են Տէր եւ Տիկին Չոհրապ եւ Լիզա Մանուկեանները: Ձեռնարկը կազմակերպուած է եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ Տիկնանց Մարմինին կողմէ:

ANNUAL BANQUET OF ST. SARKIS CHURCH

On Friday, March 2nd, the annual banquet of St. Sarkis Church of Pasadena is scheduled to take place under the auspices of the Prelate. The banquet is organized by the parish Pastor, Board of Trustees, and Ladies Association, and hosted by Mr. & Mrs. Zohrab and Liza Manoogian

The Prelate will preside over the event and convey his blessings and best wishes

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ

Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի Շրջանի 14-րդ ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ Ուրբաթ, Մարտ 2-ին եւ Շաբաթ, Մարտ 3-ին, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան Կլենտէյլի Կեդրոնատեղիի սրահին մէջ:

Ժողովին պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Մարտ 2-ին, երեկոյեան ժամը 7:30-ին: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ բացման արարողութեան, փոխանցելու իր հայրական օրհնութիւնները եւ յաջողութիւն մաղթանքները:

PRELATE TO CONVEY HIS BLESSINGS TO THE HAMAZKAYIN REGIONAL EXECUTIVE MEETING

The representatives meeting of Hamazkayin Regional Executive is scheduled to convene on the evening of Friday, March 2nd, and conclude on Saturday, March 3rd, at the hall of A.R.S. Regional Executive in Glendale.

The Prelate will attend the opening ceremony and convey his blessings to the participants.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Շաբաթ, Մարտ 3-ի երեկոյեան ժամը 7-ին, համերգ մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Փրեսպիթերիըն եկեղեցւոյ մէջ, կազմակերպութեամբ «Լարք» Երաժշտական ընկերակցութեան եւ Armenian Missionary Association of America-ի:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

PRELATE REPRESENTED AT THE LARK CONCERT

The LARK musical society, in collaboration with the Armenian Missionary Association of America, has organized a concert for Saturday, March 3rd, at Glendale Presbyterian Church in Glendale.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԴԵՍՊԱՆ ԻՎԸՆԶԻ Ի ՊԱՏԻՒ ՍՏՇԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Կիրակի, Մարտ 4-ի երեկոյեան ժամը 5:30-ին, USC Համալսարանի Հայագիտական Ամպիոնը կազմակերպած Է պաշտօնական ընդունելութիւն մը, ի պատիւ Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու Դեսպան ճան Իվընզ:

Ընդունելութիւնը տեղի պիտի ունենայ Beverly Hilton պանդոկին մէջ:
Առաջնորդ Սրբազան Զայրը պիտի ընդառաջէ տրուած հրաւերին:

PRELATE TO ATTEND USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES BANQUET HONORING AMBASSADOR EVANS

The second annual banquet of the USC Institute of Armenian Studies is scheduled to take place on Sunday, March 4th, at the Beverly Hilton Hotel. The banquet is taking place in honor of Ambassador John Evans.

The Prelate will attend and convey his blessings.

ՀԱՄԱՍՉԳԱՅԻՆԻ «ԱՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄԻ ԵԼՈՅԹԻՆ

Կիրակի, Մարտ 4-ի երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլ High School-ի սրահին մէջ տեղի պիտի ունենայ Համազգայինի «Անի» պարախումբի տարեկան ելոյթը:

Իբրեւ Առաջնորդ Սրբազան Զոր ներկայացուցիչ, Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

PRELATE REPRESENTED AT THE HAMAZKAYIN ANNUAL PERFORMANCE

On Sunday, March 4th, the annual performance of the Hazmakayin “Ani” dance company will take place at Glendale High School.

Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org. Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.